

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

«ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԱԶՄՈՒՄ»

Պատվիրատու Ակունքի համայնքապետարան

Պայմանագիր № ԿՄԱՀ-ՄԱ-ԱՇՁԲ-26/01

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐԲ 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ տնօրեն

Ա. Բաբսեդյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ

Ն. Սարգսյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

- Գիրք 1 - Աշխատանքի կազմակերպման նախագիծ
- Գիրք 2 - Աշխատանքային գծագրեր
- Գիրք 3 - Ծավալաթերթ-նախահաշիվ
- Գիրք 4 - Նախահաշիվներ



Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներդրումն ու հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԿՈՒԼԶ ՀԱՄԱՅՆԸ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆԸ)

N ՆԹ-1787-26

20.02.2026թ.

Օրյեկտ Կառուցում, Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների տնային միացումներ,

(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների տնային միացումներ

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

Նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) Նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Ակունք գյուղ,

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒԼԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԳԾՄ»

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄՍԲ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ

փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը մինչև 20.08.2027թ.

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Տ Ա Գ Ծ Վ ՈՂ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

ՀՀԿոտայքի մարզ Ակունք համայնք գյուղ Ակունք

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափսերը

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))

3. Հողամասի առկա վիճակը

Կառուցապատված է

(ռեկոնստրուկցիոն, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

գյուղամիջյան գրունտային ճանապարհներ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Գոյություն ունեցող ինժեներական ցանցեր

6. (*) Կից հողամասեր

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(Նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

առկա են հողամասեր, բնակելի տներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

չկան

(հուշարձանի անվանումը)

չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներարևասպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների տնային միացումներ՝ ՀՀԿոտայքի մարզ Ակունք համայնք գյուղ Ակունք

(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Համաձայն Նորմերի

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Համաձայն Նորմերի

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների Նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. Նախագծման Նորմեր» շինարարական Նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

Կառուցապատումը իրականացնել սահմանված Նորմերին համապատասխան

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%))

9.7 այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

չկան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

չկան

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

գոյություն ունեցող ցանցեր

12.1 (*) ջրամատակարարում
կոյուղի, տաք ջրի
մատակարարում

Նախագծվող կոյուղագծի ողջ երկայնքով անցնում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող ջրագծեր, առկա են տնային միացումներ և ջրաչափական դիտահորեր: Անհրաժեշտ է նշված կոմունիկացիաներից պահպանել ՀՀ Շին նորմերով պահանջվող հեռավորությունները: Հողային աշխատանքներն իրականացնելիս տեղեկացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ նկերության աշխատակցին՝ հեռ. 055-500-536:

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) Էլեկտրամատակարարում

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է այդ մասին տեղեկացնել <<ՀԵՑ>> ՓԲ ընկերության աշխատակիցներին և պահպանել ՀՀ կառավարության կողմից հաստատված անվտանգության կանոններն ու նորմերը: Առանց <<ՀԵՑ>> ՓԲ ընկերության համապատասխան ներկայացուցչի ներկայության, որևէ շինարարական աշխատանք չիրականացնել:

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Նշված բնակավայրում առկա են ստորգետնյա տարբեր ճնշման գազատարներ: Հողային աշխատանքներ կատարելիս «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմյանի ԳԳՄ-ի աշխատակիցների ներկայությունը պարտադիր է (093610800):

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային
հաղորդակցություն մալուխատար
կոյուղու (ներառյալ դիտահորը)
տեղադիրքը

Առկա չէ

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Առկա չեն

12.6. աղբահանություն

Ըստ գրաֆիկի

13. Տարածքի ինժեներական
նախապատրաստում

ռելիեֆի նախապատրաստում

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովագո և այլն)

15. Շինարարական նյութեր

օգտագործել ստանդարտներին /ԳՈՍ/ համապատասխանող
շինարարական նյութեր՝ շրջակայքին համապատասխան

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Ըստ նախագծի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային
պահանջներն

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և
բնակչության սակավաշարժ
խմբերի պաշտպանության
միջոցառումներ

Ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի
տեղաշարժը

19. Շրջակա միջավայրի
պահպանում

Ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան
միջոցառումները

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության
կազմակերպում

Նախագծով ապահովել

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության
ժամկետը և նախագծի մշակման
փուլերը

մինչև 20.08.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային
փաստաթղթերի
փորձաքննությանը
ներկայացվող պահանջներ

Պարզ փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Չկան

24. Հասարակական
քննարկումներ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքսփրային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

Չկան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ
Մասնագիտական
եզրակացությունների ստացում

Չկան

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահորժողի) հետ)

26. Փոստային բաժանորդային
պահարանների տեղադրում

Չի պահանջվում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահորժողի) հետ)

27. Զաղաքաշինական
կանոնադրությամբ ամրագրված
լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-003195, 3-րդ դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐԿԱԾ Է

2025-10-08, «ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՖՐՈՒՆԶԵԻ Փ., 6/5, 23 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 08.10.2030թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)



ՀՄԿԻԶ ՀԱՄԱՐ՝ UG73-9BDD-FD38-8FBE

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-003195-08

(ներդիրի սերիան, համարը)

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՍԵԼՈՐԱՑԻԱ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

08.10.2025թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝

08.10.2030թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում



ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG85-145F-4D98-62E8

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքապետարանի պատվերով «ՖԻ ՊՐՈՆԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից մշակվել է «Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների տնային միացումների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ):

ԱՆ-ի մշակման համար հիմք են հանդիսացել Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական և ճարտարապետահատակագծային առաջադրանքները, աշխատանքային նախագծի իրականացման շրջանակներում մեր կողմից տեղում կատարված ուսումնասիրությունները, Ակունք համայնքի ներկայացուցիչների հետ կայացած քննարկումները և դրանց արդյունքում կայացված որոշումները:

Սույն ԱՆ-ի հիմնական նպատակն է Ակունք բնակավայրի ջրահեռացման համակարգի տնային միացումների կառուցումը:

ԱՆ-ի սույն փաթեթը ներառելու է աշխատանքային 4 գրքեր՝

- Գիրք 1 Աշխատանքի կազմակերպման նախագիծ
- Գիրք 2 Աշխատանքային գծագրեր
- Գիրք 3 Ծավալաթերթ-նախահաշիվ
- Գիրք 4 Նախահաշիվներ

ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ակունք բնակավայրում կառուցվել է նոր կոյուղու համակարգ, որտեղ բացակայում են տնային միացումները: Տեղի բնակիչները այդ հարցը լուծել են անհատական սեպտիկ հորերի կամ նորմերի խախտմամբ կառուցված կոյուղագծերի միջոցով:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Համաձայն տեխնիկական առաջադրանքի նախատեսվում է կառուցել Ակունք Բնակավայրի ջրահեռացման համակարգը:

Նախագծով նախատեսվում է կառուցել մոտ 3.55կմ երկարությամբ տնային միացումներ: Ելնելով հիդրավլիկական հաշվարկներից և տեղանքի թեքություններից նախատեսվել է կոյուղագծերը իրականացնել 150մմ տրամագծի գոֆրե խողովակներից:

Նախագծով նախատեսվում է նոր կառուցվող դիտահորերը տեղադրել տներին հնարավորինս մոտ, իսկ տներից դուրս եկող կոյուղագծերը բաժանորդների կողմից իրականացվելու է ինքնուրույն՝ մինչև նախագծվող կոյուղու համակարգի մոտակա հորը:

Տնային միացումների ուղեգծերը շինարարության ընթացքում պետք է համաձայնեցնել մասնավոր սեփականատերերի հետ սահմանազատման կետի որոշման համար: Շինարարության ընթացքում պարտադիր է առկա կոմունիկացիաների ինժեներների ներկայությունը շինարարության հրապարակում:

Սույն նախագծի շրջանակներում կիրառվել է «ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Ակունք Բնակավայրի կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» աշխատանքային նախագծի երկրաբանական հաշվետվության տվյալները, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերում անհրաժեշտ տվյալները:

Ներկայացված աշխատանքային նախագծի հիմնական մոտեցումները քննարկվել և համաձայնեցվել է համայնքի ներկայացուցիչների հետ:

Նախագիծը կազմված է պահպանելով շինարարության իրականացման ՀՀ-ում գոյություն ունեցող նորմաները և կանոնները:

1	Շինարարության կազմակերպման դրույթներ.....	2
1.1	Շինարարական մեքենաների մոտեցումը շինարարական հրապարակին	2
1.2	Տրանսպորտային սխեմա	2
1.3	Շինարարական հրապարակի տեղակայումը.....	3
1.4	Շինարարության յուրահատկությունները	3
1.5	Աշխատանքների իրականացում.....	4
1.6	Աշխատանքների իրականացման հերթականություն	7
1.7	Կոյուղագծի մոնտաժ	8
1.8	Ոչ ճնշումային խողովակաշարի փորձարկում	10
1.9	Շինարարության կազմակերպման այլ մոտեցումներ	12
1.10	Շինարարական տնտեսություններ	13
1.11	Հիմնական մեքենաները և մեխանիզմները	13
1.12	Շինարարության տնողությունը.....	13
1.13	Աշխատանքային կադրեր	14
1.14	Շինարարական որակի հսկողություն	14
1.15	Շինարարության հրապարակի մատակարարում ժամանակավոր էլեկտրաէներգիայով և ջրով.....	15
1.16	Աշխատանքների պահպանությունը.....	15
1.17	Շրջակա միջավայրի պահպանության.....	16
1.18	Սոցիալական նախազգուշական միջոցառումներ շինարարության ընթացքում.....	16

1 Շինարարության կազմակերպման դրույթներ

Տվյալ շինարարության կազմակերպման դրույթները բերվում են Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի տնային միացումների կառուցման աշխատանքների ջրահեռացման համակարգի վերակառուցման աշխատանքների իրականացման համար:

Շինկազմակերպման տվյալ մոտեցումները հանդիսանում են կողմորոշիչ կապալառուի համար: Շինարարության կազմակերպման վերջնական տարբերակը ընտրում է կապալառուն, ծանոթանալով տվյալ շինկազմակերպման տարբերակին՝ կամ ընդունելով այն, կամ մշակելով իր տարբերակը:

Կապալառուն իրավասու է մշակել շինարարության կազմակերպման սեփական տարբերակը և համաձայնեցնելով պատվիրատուի հետ կիրառել այն:

Կապալառուն աշխատանքների արժեքը որոշելիս պետք է հաշվի առնի առաջարկվող շինարարության կազմակերպման տարբերակը, որի հետ կապալառուն պետք է ծանոթանա և առաջարկվող տարբերակը, իր կողմից ընդունելու դեպքում, տվյալ աշխատանքները գնահատի և ընդգրկի ծավալների ամփոփագրի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:

1.1 Շինարարական մեքենաների մոտեցումը շինարարական հրապարակին

Շինարարական մեքենաների մոտեցումը շինարարական հրապարակին, շինանյութերի մատուցման համար, առաջարկվում է իրականացնել Ակունք բնակավայրի փողոցներով:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների մոտեցումը և տեղակայումը կատարվում է բնակավայրի փողոցներով և գրունտային տարածքներով: Շինարարական մեքենաների և մեխանիզմների աշխատանքը մասամբ կատարվելու է արտաքին խանգարող առարկաների առկայությամբ և փողոցների բնույթի հատվածներում:

1.2 Տրանսպորտային սխեմա

Շինարարական նյութերի մատակարարումը շինարարական հրապարակ իրականացվելու է ավտոտրանսպորտով համապատասխան բետոն, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ արտադրող գործարանից, պոլիէթիլենային խողովակներ արտադրող կամ ներմուծող գործարանից, ինչպես նաև այլ նյութերի (ավազի) մատակարարողներից, հիմնականում հանրապետական նշանակության ավտոճանապարհներով և վերոնշված բնակավայրերի փողոցներով դեպի շինհրապարակ:

Կապալառուն պետք է աշխատանքները կազմակերպի այնպես, որպեսզի նշված ճանապարհները գործեն շինարարության աշխատանքների իրականացման ընթացքում,

չխախտելով ՀՀ տրանսպորտի և կապի մինիստրության պահանջները:

1.3 Շինարարական հրապարակի տեղակայումը

Շինհրապարակը գտնվում է՝

- Ակունք համայնքի Ակունք բնակավայրի տարածքում:
- Երևանից՝ - 22.5կմ

Շինարարական հրապարակը իրենից ներկայացնում է գրունտային, կամ ասֆալտապատ փողոց և տարածք, 1470մ ծովի մակերևույից:

1.4 Շինարարության յուրահատկությունները

1. Տվյալ շինարարությունը հիմնականում իրականացվելու է փողոցի բանուկ հատվածում, փողոցային տրանսպորտի աշխատանքի հետ զուգահեռ:

2. Շինարարական աշխատանքների համար արտաքին և ստորգետնյա խանգարող առարկաներ և կառույցներ են հանդիսանում գոյություն ունեցող՝ էլեկտրահաղորդիչ և էլեկտրալուսավորիչ գծերը և հենասյուները, բնակելի տների և այլ կառույցների պատերը, ցանկապատերը, կոյուղագծերը, խողովակաշարերը: Նշված արտաքին և ստորգետնյա խանգարող առարկաների և կառույցների հատվածներում ավտոինքնաթափերի, ավտոկոունկի և բանվորների աշխատանքը իրականացվում է համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ, պահպանելով անվտանգության տեխնիկայի բոլոր պայմանները և պահանջները, համաձայն գործող ՀՀ 13-02-2022 «Աշխատանքների անվտանգությունը շինարարությունում» նորմերի:

3. Շինարարական հրապարակի որոշ հատվածներ սահմանափակված է արտաքին և ստորգետնյա գոյություն ունեցող շինություններով և կոմունիկացիաներով, որի պատճառով շինարարական մեխանիզմների և մեքենաների աշխատանքը սահմանափակված է: Ուստի հողային և մոնտաժային աշխատանքների բավականին հատվածը իրականացվելու է ձեռքով բանվոր ուժի օգնությամբ:

4. Փորվածքի խորհությունը միջինում նախատեսված է 1.2 մ-ի սահմաններում:

Նշված բոլոր յուրահատկությունները և դրա հետ կապված և առաջացած բարդությունները և լրացուցիչ աշխատանքերը, կապալառուն պետք է հաշվի առնի և աշխատանքների միավոր արժեքը որոշելիս կիրառի համապատասխան գործակիցներ և հաշվի առնի մեխանիզմով և բանվոր ուժի օգնությամբ իրականացվող աշխատանքների չափաբաժինները:

1.5 Աշխատանքների իրականացում

Տվյալ շինարարության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ որոշակի հատվածներում շինարարական և մոնտաժային աշխատանքերը կատարվելու են փողոցի բանուկ հատվածներում, շինարարական աշխատանքերի ձեռքով իրականացման որոշակի չափաբաժնով: Շինարարական մեքենաների և մեխանիզմների աշխատանքը իրականացվելու է մասամբ արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում:

Շինարարության ընթացքում հարկ կլինի շինայութերի տեղափոխում ձեռքով տեղադրման հատված:

Հողային աշխատանքներ

Մշակման ենթակա բնահողերը պատկանում են III, IV, V և VI մշակման կարգերի:

Բուսահողի առկայության դեպքում նրա կտրումը իրականացվում է առաջնահերթ, կուտակվում առանձին, առանց խառնելով այլ կարգի օգտակար հանույթի բնահողերի հետ, ապա խրամուղու հետլիցքից հետո իրականացվում է բուսահողի վերականգնում նույն տեղում, կամ համապատասխան մարմինների ցուցումով նշված այլ տարածքում:

Փափուկ III և IV կարգի բնահողերը մշակվում են առանց նախնական փխրեցման:

Փխրաժայռային V կարգի բնահողերը էքսկավատորով մշակվում են առանց նախնական փխրեցման:

Ժայռային VI կարգի բնահողերը էքսկավատորով մշակվում են նախնական փխրեցմամբ: Փխրեցումը իրականացվում է մեխանիկական եղանակով հիդրոմուրձի, կամ նմանատիպ այլ սարքավորումով, ծավալի 50%-ի չափով:

Օգտակար հանույթի բնահողերը տեղակայվում են՝ փափուկ բնահողերը առանձին, իսկ ավելորդ բնահողերը, որոնք չեն օգտագործվում հետլիցքի համար, տեղափոխվում են 1կմ թափոնավայր Ակունք բնակավայրի աղբավայր:

Նախատեսված կոյուղագծի խրամուղու բնահողերի մշակումը իրականացվում է հիմնականում էքսկավատորով նեղ շերտերով, որը կապահովի նախատեսված խրամուղու հատակի լայնությունը: Էքսկավատորի մշակումից հետո իրականացվում է խրամուղու հատակի և շեղերի լրամշակում ձեռքով /փափուկ բնահողերում/, հասցնելով խրամուղու հատակի նիշը նախագծային նիշին: Մասնավոր տների մոլորքերի տարածքում հնարավոր է խրամուղու մշակումը և գոֆրե խողովակների տեղադրումը իրականացվի ձեռքով:

Խրամուղու բացման ժամանակ պետք է ստուգել առկա դիտահորի և մասնավոր սեփականատիրոջ կոյուղագծի հնարավոր միացման տեղը և նիշերը: Մասնավոր սեփականատիրոջ հետ համաձայնեցնելուց հետո՝ պահպանելով նվազագույն թեքությունները

անհրաժեշտ է իրականացնել կոյուղագծի տեղադրումը ըստ նախագծի:

Գոյություն ունեցող կոյուղագծին միացումների, շինություններից մոտ 2մ հատվածների սահմաններում բնահողերի մշակումը իրականացվում է ձեռքով, պահպանելով գոյություն ունեցող կառույցները վնասումից:

Խրամուղու բնահողերի մշակումը մասամբ իրականացվում է էքսկավատորով արտաքին և ստորգետնյա խանգարող առարկաների առկայության պայմաններում: Այլ հատվածներում, որտեղ շինհրապարակի լայնությունը չի բավարարում էքսկավատորի աշխատանքի համար, բնահողերի մշակումը իրականացվում է ձեռքով, հարկ եղած դեպքում բնահողերի տեղափոխումով ձեռքի սայլակներով մինչև ինքնաթափ: Էլեկտրահաղորդիչ գծի հետ նախագծվող խողովակաշարի հատման հատվածում 8մ երկարությամբ խրամուղու հողային աշխատանքները իրականացվում են ձեռքով: Համաձայն ՀՀ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» գլուխ 2 պահանջների՝ պահպանվում են վտանգավոր գոտու սահմանները բերված աղյուսակ 2 –ում: Կապալառուն էլգծին կից աշխատառող էքսկավատորի աշխատանքների միավոր արժեքը որոշելիս պետք է հաշվի առնի արտաքին խանգարող առարկաների գոյության գործակիցը: Էքսկավատորի և ավտոկռունկի սլաքի թռիչքը չպետք է հատեն վերոնշյալ վտանգավոր գոտու սահմանները: Շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն միայն չոր եղանակին: Անձրևոտ և խոնավ եղանակին շինմոնտաժային աշխատանքների իրականացումը խստիվ արգելվում է:

Գոյություն ունեցող կոմունիկացիաների հետ հատման հատվածում գոյություն ունեցող կոմունիկացիաների եզրագծից երկու կողմից 1մ հեռավորությամբ խրամուղու հատվածի բնահողի մշակումը և ասֆալտբետոնյա ծածկույթի քանդումը կատարվում է ձեռքով, զգուշությամբ չվնասելով գոյություն ունեցող կոմունիկացիաները:

Նախատեսվող խողովակաշարերի և կառույցների խրամուղիների և փոսորակների՝

- շեպերի թեքությունը, ըստ մշակման ենթակա բնահողերի կարգերի, պետք է համապատասխանի ՀՀ 13-02-2022 -ի պահանջներին
- խրամուղիների և փոսորակների հատակի լայնությունը պետք է համապատասխանի ՇՆԿ 3.02.01-87 -ի պահանջներին:

Խրամուղու և փոսորակների խորությունները նախատեսված են 1.2մ-ի սահմաններում:

Հողափոր մեքենաներով մշակվող խրամուղիների և փոսորակների պատերի ամրացումը գերադասելի է ամրացնել պատրաստի վահաններով, որոնք իջեցվում են և պահանգվում են վերևից:

Եթե խրամուղու ամրակապման պահանգները խանգարում են խողովակների

մոնտաժման աշխատանքների իրականացմանը, ապա պահանգները աշխատանքի պրոցեսի ընթացքում տեղափոխվում են հաջորդ հատված (переставляются):

Խրամուղու և փոստրակների ամրակապման էլեմենտների ապամոնտաժը իրականացվում է ներքևից դեպի վեր հետլիցքի իրականացման ընթացքում և միաժամանակ պետք է հանել ոչ ավել քան 2-3 տախտակ նորմալ գրունտներում և 1 տախտակ լողային գրունտներում: Ներքին մասի տախտակների հանումից առաջ վերին մասում տեղադրվում են ժամանակավոր թեք պահանգներ: Այն տարածքներում, որտեղ ամրակապման ապամոնտաժը կարող է վնասել կառուցվող շինությունը, ինչպես նաև լողացող գրունտներում, ամրակապումը մասսամբ կամ ամբողջությամբ թողնում են գրունտի մեջ:

Հետլիցք

Նախատեսվող կոյուղային խողովակաշարի համար նախապատրաստական շերտը և մասնակի հետլիցքի խողովակի վերին եզրից 20սմ հաստությամբ, նախատեսված է իրականացնել ավազից, մնացած հետլիցքը իրականացվում է օգտակար հանույթի փափուկ բնահողերից:

Մոնտաժված կոյուղագծի հետլիցքը կատարվում է հետևյալ հերթականությամբ.

- - տեղադրված պոլիէթիլենային խողովակի վրա 20սմ հաստությամբ հետլիցքը կատարվում է ձեռքով, ավազից: Հետլիցքը տոփանվում է ձեռքով, խողովակի շուրջ բոլորը, ձեռքի տոփիչներով, մինչև նախագծային խտությանը հասնելը;
- - մոնտաժված խողովակաշարի մնացած հետլիցքը կատարվում է բուլդոզերով, հողի մեջ չպետք է լինեն խողովակաշարի տրամագծից մեծ ներխառնուկներ, ոչ ավել քան ծավալի 20% -ի չափով և այդ ներառուկները հավասարապես բաշխվում են հետլիցքի տարածքի մեջ: Հետլիցքի ժամանակ պետք է ապահովել խողովակաշարի պահպանումը և հողի նախագծային խտությունը:
- - Պոլիէթիլենային խողովակների տեղադրումից առաջ, խրամուղում հատակը ենթակա է մանրակրկիտ հարթեցման:

Հետլիցքը տոփանվում է ձեռքով, խողովակի շուրջ բոլորը, ձեռքի տոփիչներով: Ավազի և բնահողի տոփանումը կատարվում է շերտերով 10սմ-20սմ հաստությամբ խողովակի երկու կողմից միաժամանակ, ինչը կբացառի խողովակի տեղաշարժը: Տոփանումը կատարվում է ձեռքով ձեռքի տոփիչներով: Պաշտպանիչ հետլիցքի առաջին շերտը պետք է լինի խողովակի տրամագծի կեսից ոչ ավել և 20սմ ոչ ավել: Տոփանման խտությունը պետք է հասնել 85%-ից ոչ պակաս չափանիշի, իսկ հետլիցքի և նախապատրաստական շերտի համար օգտագործվող

բնահողերի կամ ավազի γ =առնվազն 1.65տ/մ³:

Եթե խրամուղին անցնում է ավտոմայրուղու տակով ապա խտացումը (ինչպես պաշտպանիչ այնպես էլ վերջնական հետլիցքը) պետք է իրականացնել 95%-ից ոչ պակաս:

Պաշտպանիչ հետլիցքի համար օգտագործվող փափուկ բնահողի կազմի մեջ չպետք է լինեն ներառուկներ խողովակի տրամագծի 1/10 –ից ավել չափերի և չպետք է լինեն ներառուկներ սույր ծայրերով: Եթե փափուկ բնահողի մեջ կլինեն վերոնշյալ ներառուկները նրաք ենթակա են հեռացման, հակառակ դեպքում բերովի փափուկ բնահողը պիտանի չէ օգտագործման համար:

Նեղ տեղերում հետլիցքը պետք է կատարել՝

- ա/ ձեռքով և մանրակրկիտ տոփումով ձեռքի տոփիչներով, ապահովելով գրունտի նախագծային խտացումը:

Ներքո բերվում են փորձնական տոփման տվյալները.

Տոփող մեխանիզմ	Խտացվող շերտի հաստությունը խտացված մարմնում, սմ	Տոփման քանակը հողի մեկ մակերեսի վրա	
		Կապակցված գրունտներ	Չկապակցված գրունտներ
Տոփիչներ 40 կգ	10, 15, 20, 25	3, 4, 5	2, 3,4

- բ/ տոփված վերջին հողաշերտի մակերեսը պետք է հարթեցնել և հասցնել նախագծում տրված նիշին:

Խրամուղու վերջնական հետլիցքի համար օգտագործվում են օգտակար հանույթի փափուկ բնահողերը, որոնք մաքրվում են խողովակի տրամագծից մեծ նեռարուկներից, տվյալ ներառուկների քանակը թույլատրելի է 20%-ի չափով:

Ավելորդ բնահողերը և մնացած թափոնները տեղափոխվում են 1կմ թափոնավայր:

1.6 Աշխատանքների իրականացման հերթականություն

Նախապատրաստական շրջանը իր մեջ ներառում է հետևյալ կետերը՝

- գեոդեզիական նշահարման հիմքի ստեղծում շինհրապարակում;
- նախագծի տեղակայում տեղանքի հետ, առանցքների և կետերի նշահարումով և ամրացումով, լրացուցիչ նշակետերի տեղադրումով;
- շինհրապարակի տարածքի մաքրում (անհրաժեշտության դեպքում)
- շինհրապարակից ջրահեռացման կազմակերպում (անհրաժեշտության դեպքում)

- շինհրապարակի աշխատանքային գոնայի լուսավորության ապահովում համաձայն ԳՕՍՍ 12.1.046-85-ի պահանջների:

Հիմնական աշխատանքերի իրականացում

Նախքան հողային աշխատանքերը սկսելը պետք է պատրաստված և տեղադրված լինեն անհրաժեշտ ցանկապատերը, նշված վտանգավոր գոնաները, պատրաստված լինի ամբողջ անհրաժեշտ ինվենտարը:

Աշխատանքերին սկսելուն ընդառաջ իրականացվում է անհրաժեշտ նյութերի և ապրանքների (խողովակներ, երկաթբետոնե հորեր և այլն) մատակարարում, մեխանիզմների, մեքենաների և սարքավորումների տեղակայում:

Աշխատանքների իրականացման հերթականությունը բացված խրամուղու մեջ՝

- խողովակաշարի ուղեգծի գեոդեզիական նշահարում
- խրամուղու հիմքի պատրաստում
- խողովակների տեղադրում
- հավաքովի երկաթբետոնե հորերի տեղադրում
- հորերում խողովակների մուտքի ծխուխում
- ավագով խողովակաշարի նախնական հետլիցքի իրականացում
- հիդրավլիկ փորձարկում (անհրաժեշտության դեպքում)
- խրամուղու վերջնական հետլիցքի իրականացում

1.7 Կոյուղագծի մոնտաժ

Գոֆրե կոյուղային խողովակների մոնտաժի առաջին տարբերակը

Գոֆրե խողովակների մոնտաժը պետք է իրականացնել համաձայն համապատասխան ինստրուկցիայի: Խողովակների մոնտաժը կատարվում է մինչև մինուս 15°C օդի ջերմաստիճանի դեպքում: Խողովակների միացումը կատարվում է խրամուղու մեջ, նախապես մաքրելով լայնուկը յուղից և կեղտից: Լայնուկային միացումը պետք է լինի ջրի հոսքին դիմացով: Խողովակների կցումը կատարվում է լայնուկային եղանակով, ռետինե միջադիրի օգտագործմամբ: Ռետինե օղակը տեղադրվում է առաջին գոֆրեի ակոսի մեջ (паз причем уплотняющий профиль должен быть направлен в сторону, противоположную направлению ввода трубы в муфту): Որպեսզի խողովակների միացումը կատարվի հավասարաչափ բոլոր կողմերից, օգտագործում են կարապիկներ: Խողովակի վրա հազցնում են սեղմիչ գոտիներ և 2 կարապիկներով հավասարաչափ ձգումով միացնում են: Խողովակի ծայրերը և ռետինե օղակները պետք է լինեն մաքուր:

Լայնուկային ծալքավոր խողովակները արագ և հեշտությամբ միանում են մուֆտայի և հատուկ ռետինե խտացուցիչ օղակների միջոցով: Մուֆտայի ներքին տրանագիծը պետք է համապատասխանի խողովակի արտաքին տրամագծին թույլատրելի շեղումներով / допуски/, նախատեսված նորմատիվային փաստաթղթերում: Մուֆտաները ունեն բավարար երկարություն, որը թույլ է տալիս խողովակի տեղադրումը մուֆտայի մեջ ամեն կողմից 3 ծալքերի խորհությամբ, ինչը կապահովի համակարգի կոշտությունը և համաառանցքականությունը:

Ռետինե խտացուցիչ օղակները տեղադրվում են ծալքերի մեջ, օղակի խտացուցիչ մակերեսը / լեզվակը/ տեղադրվում է խողովակի մուտքին հակառակ ուղղությամբ / уплотняющий профиль («язычок») резинового кольца должен быть направлен в сторону, противоположную направлению ввода трубы/: Բացի համակարգի հերմետիկության ապահովումից ռետինե օղակի լեզվակի դեպի արտաքին ուղղությամբ դիքը երաշխավորում է գրունտային ջրերի ներանցումից խողովակի մեջ:

Մուֆտայի տեղադրումից առաջ մուֆտան ներսից ծածկվում է սիլիկոնային ջրամերժ քսուկով:

Ռետինե խտացուցիչ օղակը տեղադրվում է առաջին ծալքի մեջ $\Phi 250$ մմ-1200մմ և 2 ծալքի մեջ $\Phi 125$ մմ-200մմ խողովակների համար /уплотнительное резиновое кольцо устанавливается в первом от торца углублении профиля для труб диаметром 250-1200 мм и во втором от торца углублении профиля для труб диаметром 125-200 мм/:

Լայնուկավոր ծալքավոր խողովակների կցամասերը կարելի է իրականացնել նաև զոդման եղանակով: Զոդման եղանակը և գործիքները նույնն է ինչ պոլիէթիլենե ճնշումային խողովակների համար:

Գոֆրե կոյուղային խողովակների մոնտաժի երկրորդ տարբերակը

Խողովակներից հանվում է արտաքին եզրահատքը (фаска), կտրվածքի ներքին մակերևույթը ստուգվում է ծլեփների և քերծվածքների առկայության հատնաբերման և վերացման համար: Ծլեփների և քերծվածքների առկայությունը հանդիսանում է կոյուղագծի խցանման պատճառ:

Խողովակը մտցվում է լայնուկի մեջ ձեռքով և խողովակը պետք չէ խորացնել մինչև վերջ, թողնում ենք 1սմ կոմպենսացնող արանք: Խողովակաշարի տեղադրման ժամանակ պետք է պահպանել նախագծով տրված խողովակաշարի ուղեգծի թեքությունը, ուղիղ և կոնտրթեքություններ չեն թույլատրվում:

Նախքան խողովակի մոնտաժման աշխատանքները սկսելը պատրաստվում է խրամուղու հատակը նախապատրաստական շերտով, հատակը հարթեցվում է և բերվում նախագծային

նիշին, որից հետո միայն թույլ է տրվում խողովակի տեղադրումը խրամուղու մեջ:

Հաստում կոմունիկացիաների հետ բնակավայրի տարածքում (հարկ եղած դեպքում)

Կոմունիկացիաների հետ հաստման լրացուցիչ աշխատանքների կազմը հետևյալն է՝

1. կախոցների դետալների պատրաստում;
2. խրամուղու վրա վերադրակների տեղադրում;
3. կախվող կոմունիկացիաների տեղադրում կողովի մեջ;
4. կողովների կապում լարով և կախում վերադրակներից;
5. կախոցների քանդում:

Ջրագծի հաստումը գոյություն ունեցող խողովակների հետ /հարկ եղած դեպքում/

Գոյություն ունեցող խողովակների հաստման հատվածում բացվում 70սմ լայնությամբ, նախագծվող խողովակի վերին նիշից ոչ պակաս քան 50սմ բարձրությամբ խրամուղի, որի մեջ նախագծվող խողովակը ներքաշվում է ձեռքով, զգուշությամբ, չվնասելով գոյություն ունեցող խողովակները: Գոյություն ունեցող խողովակների լրացուցիչ ամրակապում չի առաջարկվում, որով հետև բացված խողովակի երկարությունը չի գերազանցում 1մ և լրացուցիչ ամրակապման կարիք չի առաջանում: Տեղում իրականացվող աշխատանքների ժամանակ, հարկ եղած դեպքում, պետք է իրականացնել բացված խողովակի հատվածի ժամանակավոր ամրակապում ժամանակավոր հենասյուների տեղադրումով:

1.8 Ոչ ճնշումային խողովակաշարի փորձարկում

Ոչ ճնշումային խողովակաշարը հերմետիկության փորձարկմանը ենթարկվում է երկու անգամ՝ նախնական – մինչև հետլիցքը և վերջնական (приемочное) հետլիցքից հետո:

Փորձարկումը իրականացվում է երկու եղանակով՝

առաջին – ջրի ծավալի որոշումով, որը ավելացվում է խողովակի մեջ, երբ խողովակաշարը անցկացված է է չոր բնահողերի մեջ, ինչպես նաև թաց բնահողերում, երբ գրունտային ջրերի մակարդակը վերին հորի մոտ տեղակայված է հողի մակերրեսից ցածր ավելի քան խողովակի տեղադրման խորության կեսից, հաշվելով լյուկից մինչև թաղազագաթը (шелыга);

երկրորդը – խողովակի մեջ ջրի ներհոսման որոշումով, երբ խողովակաշարը անցկացված է թաց բնահողերում, երբ գրունտային ջրերի մակարդակը վերին հորի մոտ տեղակայված է հողի մակերրեսից ցածր ոչ ավել քան խողովակի տեղադրման խորության կեսից, հաշվելով լյուկից մինչև թաղազագաթը (шелыга);

Տեղադրվող խողովակաշարը մոնտաժվելու է չոր բնահողերում, ուստի ընդունվում է փորձարկման առաջին եղանակը:

Ոչ ճնշումային խողովակաշարերի հորերը, որոնք ունեն ներքին մակերևույթի հիդրոմեկուսացում հերմետիկության փորձարկմանը են ենթարկվում ավելացվող ջրի ծավալի որոշմամբ, իսկ հորերը, որոնք ունեն արտաքին մակերևույթի հիդրոմեկուսացում – հորի մեջ ջրի ներհոսքի ծավալի որոշմամբ:

Ներքին և արտաքին ջրամեկուսացում և անջրաթափանցիկ պատեր ունեցող հորերը փորձարկման են ենթարկվում կամ ավելացված ջրի ծավալով կամ ջրի ներհոսման եղանակով: Փորձարկումը կարելի է իրականացնել խողովակաշարի հետ միասին կամ առանձին:

Ոչ ճնշումային խողովակաշարերի հերմետիկության փորձարկման հարկավոր է ենթարկել հարակից հորերի միջև գտնվող խողովակաշարի հատվածները:

Եթե կան ջրի մատարարաման հետ կապված բարդություններ ապա փորձարկումը կատարվում է ընտրովի պատվիրատուի ցուցումով՝

- խողովակաշարի մինչև 5կմ ընդհանուր երկարության դեպքում - երկու-երեք հատվածներում

- 5կմ-ից ավել ընդհանուր երկարության դեպքում – մի քանի հատվածներում ընդհանուր երկարության 30%-ից ոչ պակաս:

Նախնական հերմետիկության փորձարկումը իրականացվում է 30 րոպեի ընթացքում: Փորձարկման ճնշման չափը հարկավոր է պահպանել ջրի ճնշումով հորի կամ խողովակաշարի մեջ, թույլ չտալով նրանց մեջ ջրի մակարդակի իջեցում ավելի քան 20սմ:

Խողովակաշարը և հորը համարվում են նախնական փորձարկումը անցած, եթե նրանց գնման ժամանակ չեն հայտնաբերվում ջրի հոսակորուստներ (утечки): Թույլ է տրվում խողովակների մակերևույթի և կցվածքների քրտնում կաթիլների առաջացմամբ, որոնք չեն վերածվում շիթի (сливаются в одну струю) փորձարկվող հատվածի 5%-ից ոչ ավել մակերևույթի վրա:

Վերջնական հերմետիկության փորձարկումը պետք է սկսել ե/բետոնյա խողովակաշարում և հորերում ջրով լցված վիճակում 72 ժամ, ուրիշ նյութերից 24 ժամվա ընթացքում պահպանումից հետո:

Հետլցված խողովակաշարի հերմետիկությունը վերջնական փորձարկման ժամանակ որոշվում է երկու եղանակով՝

- վերին հորում չափվող ծավալին ավելացնում են խողովակաշարի կամ հորի մեջ ջուր 30

րոպեի ընթացքում, այդ ժամանակ ջրի մակարդակի իջեցումը թույլ է տրվում ոչ ավել քան 20սմ-ով;

- ներքին հորում խողովակաշարի մեջ գրունտային ջրերի հոսքի չափվող ծավալով:

Խողովակաշարը համարվում է վերջնական փորձարկումը անցած եթե փորձարկման ժամանակ ավելացված և գրունտային ջրերի հոսքի ծավալները կլինեն ոչ ավել քան ՇՆԱԿ 3.05.04-85 8 աղյուսակում բերված ցուցանիշները:

1.9 Շինարարության կազմակերպման այլ մոտեցումներ

Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է ունենա բոլոր համաձայնությունները, տրված համայնքապետարանի համապատասխան բաժինների կողմից կապված, գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, ավելորդ բնահողերի տեղափոխման կամ տեղակայման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ, և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծի, խմելու ջրի խողովակաշարի, գազատարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Գրունտային ճանապարհներով գրունտների, ավազի, խճաքարի և թափոնների տեղափոխման ժամանակ կապալառուն պետք է հաշվի առնի գրունտային ճանապարհների պահպանման և վերանորոգման աշխատանքների իրականացումը և ընդգրկի ծավալների ամփոփագրերի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:

Ավելորդ բնահողերի և թափոնների տեղափոխման ժամանակ ավտոինքնաթափի թափքը պետք է ծածկված լինի պոլիէթիլենային թաղանթով, որը կպաշտպանի շինաղբի թափումը և քաղաքի փողոցների և քաղաքից դուրս ճանապարհների աղտոտումը:

Կապալառուն աշխատանքների միավոր արժեքը որոշելիս պետք է հաշվի առնի նեղ պայմաններում իրականացվող աշխատանքի գործակիցը:

Նախագծով նախատեսված է քանդման և ապամոնտաժման աշխատանքներ: Բոլոր ապամոնտաժման և քանդման աշխատանքները պետք է իրականացվեն զգուշությամբ, չվնասելով գոյություն ունեցող կառույցները և շինությունները, աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան գործիքներով և ապարատներով:

Շինարարության կազմակերպման հետ կապված բոլոր լրացուցիչ ծավալները պետք է կապալառուն ինկատի ունենա և ընդգրկի ծավալաթերթի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:

1.10 Շինարարական տնտեսություններ

Առաջարկվում է կազմակերպել մեկ շինարարական տնտեսություն համապատասխան օժանդակ կառույցներով, որը շինարարության ընթացքում կտեղակայվի իր համար հատկացված համապատասխան չօգտագործվող տարածք:

Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

h/h	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգ. կՎտ	Ծանոթա- գրություն
1	2	3	4	5	6
1	Աշխեկի գրասենյակ	1	8.6 x 3.1	6	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7 x 3.0	6	կոնտեյներային
3	Մեկ տեղանոց բիոզուգարան	1	D 1.3	1	-
4	Կիսաձածկ պահեստ	1	10.0 x 5.0		-
5	ՇԷԿ –30 (հարկ եղած դեպքում)	1	2.3 x 0.89		AD-30C-PM1
6	ՇԷԿ –60 (հարկ եղած դեպքում)	1	2.7 x 1.95		AD-50C-P

Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակում բերված ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

1.11 Հիմնական մեքենաները և մեխանիզմները

Շինարարական մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվությամբ և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանը կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մականիշը և տիպը	Ծանոթությ ուն	Քանակ, հատ
1	Ավտոինքնաթափ	Առնվազն բեռնունակ. 10տ		4
2	Էքսկավատոր	շերտի տարողությունը ըստ պահանջի (նեղ- շերտի)		2
3	Բուլդոզեր	Առնվազն 59-96կՎտ		1
4	Ձեռքի պնեմատոփիչ	40կգ		2
5	Ինքնագնած գլղոն	Առնվազն 6տ	Կամ բեռնված ինքնաթափ	1

1.12 Շինարարության տևողությունը

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և

կազմել է 5 ամիս, ներառյալ նախապատրաստական շրջանը:

Իրադրության ցանկացած փոփոխության դեպքում, երբ անհրաժեշտ է դառնում տեխնոլոգիական պրոցեսի ընդմիջում և որոշակի աշխատանքների տեղափոխումը այլ ժամանակահատվածի, կապված կոնկրետ արտադրական պայմանների հետ Կապալառուն պարտավոր է կազմել աշխատանքների կատարման գրաֆիկ, հաստատել Պատվիրատուի մոտ:

Շինարարական պայմանագիրը կնքելիս Կապալառուն պարտավոր է ժամանակին կազմակերպել շինարարության անհրաժեշտ նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսների մատակարարումը, որը կապահովի պայմանագրով նշված շինարարության ժամկետի պահպանումը:

1.13 Աշխատանքային կադրեր

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ, ներառյալ զոդոդներ և բետոնագործներ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համաձայն նորմատիվային տվյալների:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխույժի կողմից:

1.14 Շինարարական որակի հսկողություն

Շինարարության տեխնիկական որակի հսկողությունը-միջոցառումների համալիր է, որն իրականացվում է շին-մոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում և ուղղված է պարզելու իրականացվող աշխատանքների համապատասխանությունը որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև կանխելու անորակ շինարարության իրականացումը: Որակի հսկողությունն իրականացվում է՝

1. հսկողական ստուգումներ

2. հսկողական չափագրումներ

3. աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներ

4. փորձարկումներ

Որակի տեխնիկական հսկողությունն իրականացնելիս անհրաժեշտ է՝ շինարարության ընթացքում ապահովել գեոդեզիական սպասարկում և չափագրություններ համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցնել ինժեներական սարքավորումների տեղադրումը, գրանցման և փորձարկման հետ կապված հարցերը, պարբերաբար ստուգել բոլոր կատարած շին-մոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց

համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին, ստուգելով շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյությունը: Նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը և արգելքը ձևակերպել համապատասխան ակտերով:

1.15 Շինարարության հրապարակի մատակարարում ժամանակավոր էլեկտրաէներգիայով և ջրով

Շինհրապարակի մատակարարումը ժամանակավոր էլեկտրաէներգիայով կատարվում է պահպանելով հետևյալ ընդհանուր մոտեցումները^ա

- եթե շինհրապարակը գտնվում է բնակավայրի տարածքում և ունի համեմատաբար ոչ մեծ կիրառման հզորություն, ապա որպես էլեկտրաէներգիայի սնուցման աղբյուր ցանկալի է օգտագործել քաղաքային ցածր լարման ցանցը:
- էլեկտրաէներգիայի միացումը պետք է կատարվի ինվենտար գլխավոր ցածրավոլտաժան վահանակի միջոցով, որը կոմպլեկտավորված կլինի անջատիչով, պահպանիչով, հաշվարկի սարքերով, տեղադրված փակվող մետաղական արկղում:
- կարելի է օգտագործել համապատասխան հզորության շարժական էլեկտրակայաններ:

Շինհրապարակի ժամանակավոր ջրամատակարարումը պետք է իրականացնել առավելագույնս օգտագործելով տեղական ջրաղբյուրները:

1.16 Աշխատանքների պահպանությունը

Այս բաժնում բերվում են հարցերի այն շրջանը և դրանց կատարումը կապված շինարարական աշխատանքների, հակահրդեհային անվտանգության, ինչպես նաև աշխատանքների պահպանության նորմատիվային պահանջների կատարման և հսկողության հետ:

Անվտանգության նորմերը և կանոնները, որոնք տարածվում են է շին-մոնտաժային աշխատանքների վրա, անկախ այդ աշխատանքների գերատեսչական ենթակայությունից, թելադրվում են ՀՀ 13-02-2022 'Աշխատանքների անվտանգությունը շինարարությունում' ընդհանուր պահանջների փաստաթղթով:

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների՝ աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով, ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

Շինարարական աշխատանքները պետք է կազմակերպել խիստ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները համաձայն ՀՀ 13-02-2022:

Մշտական վտանգավոր զոնայում գտնվող վերակառուցվող հատվածի շինհրապարակը պետք է մեկուսացվի պաշտպանիչ պարսպող ցանկապատով համաձայն ԳՈՍՏ 23407-85:

Պոտենցիալ վտանգավոր զոնայում գտնվող վերակառուցվող հատվածի շինհրապարակը պետք է մեկուսացվի ազդանշանային պարսպող ցանկապատով համաձայն ԳՈՍՏ 23407-85:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարությունը իրականացվելու է հետյոտների բանուկ հատվածում, պաշտպանիչ պարսպող ցանկապատը պետք է ունենա հովար (сложной защитный козырек):

Շինհրապարակը պետք է լուսավորվի: Լուսավորությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող ազդեցության: Ոչ լուսավորված տարածքներում աշխատանքների կատարումը արգելվում է:

1.17 Շրջակա միջավայրի պահպանություն

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և մաքսիմալ պահպանվի բնական լանդշաֆտը:

1.18 Սոցիալական նախազգուշական միջոցառումներ շինարարության ընթացքում

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:

Մասնավոր հոդերի ժամանակավոր կամ մշտական օգտագործումից խուսափում, իսկ այդպիսի անհրաժեշտության դեպքում՝ պատվիրատուի տեղեկացում:

2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:

3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, և այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ արմատները վնասում են ջրանցքը/խողովակները) և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո: Կապալառուի կողմից ծառերի հեռացման (փոխհատուցվում է դրամով), ինչպես նաև շինությունների ժամանակավոր հեռացման (հիմնականում կամուրջներ, որոնք աշխատանքներից հետո նորից կառուցվելու են) ծախսերի իրականացում: Այս փոխհատուցման

և վերականգնման գործընթացը կիրականացվի մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, և կապալառուն պատվիրատուին կներկայացնի տեղեկատվությունը Տարաբնակեցման Քաղաքականության շրջանակային փաստաթղթում ներկայացված ձևաթղթերով, և եթե պատվիրատուի և ՀԲ-ի կողմից առարկություններ չլինելու դեպքում միայն՝ կարող է իրականացնել այդ աշխատանքները: Ծառերի հեռացման դեպքում՝ կմշակվեն Տարաբնակեցման Գործողությունների Ծրագրերի (ՏԳԾ), մինչդեռ կամուրջների և այլ ոչ արտադրական ակտիվների ժամանակավոր հեռացումը՝ Պատվիրատուին կներկայացվի ընթացիկ հաշվետվություններում:

4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:

5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:

6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների բնակության հետ կապված սանիտարական միջոցառումների իրականացում:

7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներգրավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահովված կլինեն ջրով և կոյուղով:

8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:

9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո՝ վերականգնողական աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ էաթետիկ տեսքը:

Շինարարության տնօրության օրացուցային ժամանակացույց

№ հ/հ	Աշխատանքների անվանումը	Զամի միավոր	Ծա-վալը								Բանվոր-ների քանակությու-նը հերթա-փոխում	Ամիսներ				
				Անվանումը	Քա-նակը	հիմնավորում	արտադրողականութ-յունը հերթա-փոխում	Հեր-թա-փոխի քանակը	Տևողութ-յունը, օր	Տևողութ-յունը, ամիս		1	3	5	4	5
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	Նախապատրաստական շրջան								5	0.2	6	—				
2	Կապալառուի կողմից համապատասխան մարմիններից համաձայնությունների ձեռքբերում								10	0.4		—				
3	Փափուկ բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով/կողայիցքով	մ³	1827	էքսկավատոր	1	E2-1-11, աղյուսակ 2-5-վ	285.7	1	6.39	0.26	2		—	—	—	
4	Փափուկ բնահողերի քանդում ձեռքով բարձումով, կամ կողլիցքով	մ³	23.0	բանվոր	1	E2-1-31, աղյուսակ 3-2-ժ	4.0	1	5.75	0.23	2		—	—	—	
5	Փխրա-ժայռային բնահողերի և ասֆալտբետոնի քանդում էքսկավատորով բարձումով/ կողայիցքով	մ³	750.7	էքսկավատոր	1	E2-1-11, աղյուսակ 3-5-դ	133.3	1	5.63	0.23	2		—	—	—	
6	Ժայռային բնահողերի քանդում էքսկավատորով կողայիցքով/ բարձումով նախնական փխրեցումով ներառյալ հարթակի բացումը	մ³	15.0	էքսկավատոր	1	E2-1-11, աղյուսակ 3-5-ե	111.1	1	0.14	0.01	2		—	—	—	
7	Նախապատրաստական շերտի ստեղծում ավազից, տոփանումով	մ³	257.5	բանվոր, տոփիչ	2	E9-2-32 աղյուսակ 1	7.4	1	17.38	0.70	2		—	—	—	
8	Պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով ավազով, տոփանումով	մ³	826.3	բանվոր, տոփիչ	2	E2-1-44, աղյուսակ 1-2-բ	18.2	1	22.72	0.91	2		—	—	—	
9	Հետլիցք տեղի օգտակար բնահողերով մեխանիզմով, տոփանումով	մ³	943.70	բուլդոզեր , գլդոն	1	E2-1-21, աղյուսակ 2-4-բ	1038.96	1	0.91	0.0363	2		—	—	—	
11	Պոլիէթիլենե կոյուղու Փ150-200մմ խողովակների մոնտաժ, փորձարկումով, 35511մ	կցվ-ածք	3551.0	մոնտաժնիկ, բանվոր	4	E9-2-7, աղյուսակ 2, 3	10.00	1	88.78	3.5510	4		—	—	—	
12	Այլ աշխատանքներ - ասֆալտբետոնե ծածկի քանդում, վերականգնման, ապամոնտաժման աշխատանքեր, թափոնավայրի տարածքի բարեկարգում			բանվոր			կիրառելի		25	1	7		—	—	—	
13	Շինադրի մաքրում և հեռացում			բանվոր			կիրառելի		5	0.2	4					—

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

**«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի
վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»**

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող
շինարարական լիցենզիաների ցանկը

Լիցենզիայի պահանջվող դասը	Լիցենզիայի ներդիրի տեսակը	Ներդիրի ծածկագիրը
3-րդ, 2-րդ կամ 1-ին դաս	Ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխորացիա)	08

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բադալյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

**«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի
վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»**

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող
հավաստագրված մասնագետների ցանկը

Մասնագիտության անվանումը	Պահանջվող կրթությունը	Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային ստաժը, տարի	Մասնագետների նվազագույն քանակը, մարդ
Ջրամատակարարում և ջրահեռացում ճարտարագետ շինարար	բարձրագույն	5	1

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բադալյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական միջոցների և սարքավորումների ցանկ

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Ծանոթություն	Քանակ, հատ
1	Ավտոինքնաթափ	Առնվազն բեռնունակ. 10տ		2
2	Ավտոամբարձիչ	Առնվազն բեռնունակ. 16տ		1
3	Էքսկավատոր	շերեփի տարողությունը ըստ պահանջի (նեղ-շերեփ		1
4	Բուլդոզեր	Առնվազն 59-96կՎտ		1
5	Ձեռքի պնեվմատոփիչ	40կգ		1
6	Խորքային վիբրատոր	ԻՎ		1
7	Զոդման ապարատ պողպատի համար	-		1
8	Ինքնագնած գլղոն	Առնվազն 6տ	Կամ բեռնված ինքնաթափ	1

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բաքսեղյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

**«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի
վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»**

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման
նվազագույն երաշխիքային ժամկետը

Սրբույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային
ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված
աշխատանքներում:

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բաքսեղյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկը

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ցեմենտ	Այո	1
Ավազ	Այո	10
Խիճ	Այո	10
Պողպատ	Այո	50
Պոլիէթիլեն	Այո	50
Ներկանյութ	Այո	5
Բիտում	Այո	5

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բադալյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան

ՀՀ Արարատի համայնքապետարանի կարիքների համար

«Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրահեռացման կոլեկտորի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»

Նախագծում նախատեսված աշխատանքների իրականացումից հետո շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկը

Վերականգնվող հատվածներ	Շահագործման երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի	Աղբյուրը և նորմատիվը
Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիա	30	Ըստ գրականության
Միաձույլ բետոնե կոնստրուկցիա	40	Ըստ գրականության
Պոլիէթիլենե խողովակաշար, խողովակաամրաններով	50	Ըստ գրականության

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա:

«ՖԻ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝



Ա. Բաքսեղյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝



Ն. Սարգսյան